

Նուկութիւն մ'է եւ կը զանուի Անտոնեան հարց մատենագա-
րանին մէջ :

«Տապան շիրմի՛ Տեառն Գրիգորի ,

Հօր մերոյ նախնոյ՛ անուանակրի ,

Բիւզանդացւոյ վարդապետի .

Ած .տրեան՝ բարունակի :

Սա պատրիարգ՝ լեալ արժանի .

Հայկազունեացն՝ ի Բիւզանդի .

Ապա կամօք իւր՝ հրատարի ,

Ի լրումն ամացն՝ տասնեկի :

Դիմեաց ի Հոովմ՝ մայրն բարի .

Ըստ նախնոյն իւր օրինակի :

Առ ի սմանէ պատուասիրի ,

Որդիապէս՝ ըստ արժանի :

Գոյ պանդխտի յայնմ քաղաքի .

Խազաղական կենօք փայլի :

Մինչև կոչմամբն տէրունի ,

Փոխի յանանց՝ իւր հայրենի :»

Պատմաճեանի յիշատակարանէն մեր այս քաղուածքը կը հասկցնէ թէ՛ ան մեծ ծառայութիւն մատուցած էր Ս. Յակոբի վանքին թէ Ներուսաղէմ և թէ Պոլիս . Ս. Յակոբի ունեցած սէրը գործնական կերպով ալ ցոյց տուած է, ինչպէս կը վկայեն յիշատակարանին սա տողերը (էջ 105) . «... յորժամ առաւ ի ձեռաց մերոց եկեղեցական զըսպասս, որ ի յանուն և ի յիշտակ Սրբոյն Յակոբոյ կերտուցեալ և գրեալ ի վերայ իւրաքանչիւրոց յիշտակ Սրբոյն Յակոբոյ . որ յերուսաղէմ . որ ընդ յայս արար զմեզ լալագինս և միջարեկս :»

Գրիգոր պարքի կողմէն Ս. Յակոբի նուիրուած կը յիշատակուի ազամանդազարդ և տկանակուռ ոսկի սկիհ՝ մը հետեեալ յիշատակարանով . «Ողորմութեամբն Աստուծոյ կազմեցաւ սկիհս ոսկիով եւ ակամբ արդեամբ ազգին իմոյ յիշտակ ինձ Գրիգոր պարքիս կ . Պոլսոյ եւ ամենայն ողորմութիւն տուողաց զոր եզի յիշտակ անջինջ յԱթուն Սրբոյն Յակոբոյ որ յերուսաղէմ ի թուին Հայոց ՌՄԻԲ (= 1773) Յունով . Ա . :» (Յուց . պ .) :

ԳՐԻԳՈՐ ՍՍՐԿՍԻԱԳԱՊԵՏ .— Ինքնութիւնը անձանօթ անձ մը, միայն թէ իր անունով կայ զըուածք մը, հետեւեալ խո-